

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/2

9 հունվարի 2013թ.

Քննարկվեց քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի «Հ Նախագահին հասցեագրված 13.12.2012թ-ի դիմում-խնդրանքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 12.12.2012թ-ի թիվ 1410974 վարչական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20-րդ բաժնի աշխատակիցները 12.12.2012թ-ին կազմել են թիվ 1410974 արձանագրությունը, որում մասնավորապես նշված է.

սույն թվականի դեկտեմբերի 3-ին Արարատի մարզի Ոսկետափ գյուղի բնակիչ Հովսեփ Մանուկի Հեվսեփյանի մոտ կատարվեց իրերի և փաստաթղթերի հետազոտում: Պարզվեց, որ Հովսեփ Մանուկի Հեվսեփյանը շուրջ 2 ամիս զբաղվել է ոսկերչությամբ չունենալով համապատասխան պետական գրանցում: Սույն խախտման առաջացնում է պատասխանատվություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20-րդ բաժնի պետի կողմից 12.12.2012թ-ին ընդունվել է թիվ 1410974 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները՝ գումարով 260.000 դրամ:

Քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի դիմումում մասնավորապես նշված է.

Ունեմ երկու անչափահաս տղաներ, զբաղվում եմ հողագործությամբ և անասնապահությամբ: «Քարտ Ագրոկրեդիտ Ունիվերսալ» վարկային կազմակերպությունից վերցրել եմ 1.500.000 դրամի վարկ, հիմնել եմ երկու հատ 420 քմ պոլիէթիլենային ջերմոցներ: Ավարտել եմ երևանի թիվ 14 միջնակարգ ուսումնարանը և ստացել եմ մետաղյա գեղարվեստական իրերի վերականգնողի 4-րդ կարգի որակավորում: 1989-1993թ.թ. աշխատել եմ Երևանի ոսկերչական գործարանում և այլևս այդ աշխատանքով չեմ զբաղվել:

Ինձ զանգահարեցին և խնդրեցին, որ ներկայանամ «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ բաժնի պետին» նստավայրը ք.Վեդի: Ներկայացա պետին, որը ասեց, որ ինձ վրա կա գրված բողոք: Ես պահանջեցի, որ ցույց տա նշված բողոքը, սակայն նա հրաժարվեց: Ինձ ստիպեցին գրել բացատրություն, որում նշեցի, որ երկու ամսվա ընթացքում արել եմ մեկ ոսկյա մատանու վերանորոգում, որի արժեքն է 400 դրամ: Սակայն ինձ ստիպում էին, որ 400 դրամի փոխարեն գրեի 20-30 հազար դրամ: Ինձ ցույց տվեցին մի թուղթ, որում նշված տուգանքի չափը կազմում էր 260.000 դրամ, որն առաջացել է իբրև թե ապօրինի ոսկերչությամբ զբաղվելու համար:

Քաղաքացի Հովսեփ Հովսեփյանը ներկայացված դիմումով խնդրում է օգնել և հարցին տալ արդարացի լուծում:

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի և ՕՀՎ 20-րդ բաժնի աշխատակիցների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ վարչական ակտն ընդունվել է «Հ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում քաղաքացի Հովսեփ Հովսեփյանը պնդեց, որ ավարտել է Երևանի թիվ 14 միջնակարգ ուսումնարանը և ստացել մետաղյա գեղարվեստական իրերի վերականգնողի 4-րդ կարգի որակավորում, ինչպես նաև, որ նախկինում՝ 1989-1993թ.թ. ընկած ժամանակահատվածում, աշխատել է Երևանի ոսկերչական գործարանում և այլևս այդ աշխատանքով չի զբաղվել: Քաղաքացի Հովսեփ Հովսեփյանը պնդեց նաև, որ 03.12.2012թ-ին տված բացատրությունում հիշատակված ոսկերչական աշխատանքը կատարել է ոսկերչական գործարանում աշխատած տարիներին:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: <Ետևապես, քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի կողմից առանց պետական գրանցման ապօրինի գործունեություն իրականացնելու ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Քննարկվող դեպքում սույն գործում առկա միակ ապացույցը, ըստ էության, որը հիմք է հանդիսացել վարչական ակտն ընդունելու համար, հանդիսանում է քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի ՕՀՎ 20-րդ բաժնի աշխատակցին 03.12.2012թ-ին տված բացատրությունը: Ընդ որում, նշված բացատրությունում նշված չէ, թե քաղաքացի Հովսեփ Հովսեփյանը կոնկրետ որ ժամանակահատվածում է իրականացրել համապատասխան ոսկերչական աշխատանքը: Մասնավորապես, քաղաքացի Հովսեփ Հովսեփյանն իր 03.12.2012թ-ին տված բացատրությունում ընդամենը նշել է, որ շուրջ երկու ամսվա ընթացքում իր տանը կատարել է վոսկերչական աշխատանքներ: <Ետևապես, առկա չէ որևէ ապացույց առ այն, որ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. <Օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ (ապօրինի գործունեություն) զբաղվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից: ... Սույն պարբերությամբ նախատեսված տուգանքն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն է>:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն. <Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո>:

<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. <Սույն օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո>:


Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել, Հանձնաժողովը գտնում է, քննարկվող դեպքում չի հիմնավորվել քաղաքացի Հովսեփ Հովսեփյանի կողմից <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները խախտելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 12.12.2012թ-ի թիվ 1410974 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԱՐՄԵՂՅԱՆ